



Հաստատված է
Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի
4-րդ _____ նիստում
“_28_” _____ նոյեմբերի _____ 2018 թ.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:

Ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում իր գործունեությունը ծավալել է ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի համաձայն (Տե՛ս՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 1 նիստի արձանագրությունը, և այդ նույն նիստով հաստատված ֆակուլտետի խորհրդի 2018 թվականի աշխատանքային պլանը), որտեղ արտացոլված և քննարկվող հարցերը բխում են ՀՊՄՀ 2016-2020թ.թ. ռազմավարական ծրագրի և սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանից:

Այսպես օրինակ.
Ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվել են կրթության որակի բարելավմանն ուղղված հարցերը՝ ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում: Հարց, որը համալսարանի ռազմավարական ծրագրի առաջին նպատակն է՝ Բարձրորակ կրթության նորագույն մոտեցումներ: Այդ հարցերն օրինակ առնչվում են մասնագիտական կրթական ծրագրերի մասնագիտական և բովանդակային վերափոխումներին, ընտրովի դասընթացների թիրախավորմանը, մանկավարժական պրակտիկաների թղթապանակների բովանդակության հստակեցմանն ու հարստացմանը, ամբիոնների գիտաուսումնական և հետազոտական արդյունքների փոխանցմանը ուսումնական գործընթաց, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների և ինտերակտիվ մեթոդների կիրառմանն ուսուցման գործընթացում, դասախոսների և ուսանողների գործունեության մշտադիտարկմանը, վերջիններիս արդյունքների վերլուծության հիման վրա առաջարկությունների ձևակերպմանը և այլն (Տես՝ ամբիոնների, ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրություններ, դասախոսների գրանցումներ, պրակտիկայի մշտադիտարկումների հաշվետվություններ, ֆակուլտետի ռազմավարական ծրագրի ուղղություններ):

Ուսանողներին առնչվող հարցերի, նրանց կրթական կարիքների բացահայտման ուղիները.

1.Ուսանողների ներկայության ապահովումը ֆակուլտետի խորհրդի կազմում. ֆակուլտետի խորհրդի կազմի 25% -ը ուսանողներ են, որոնց թվում՝ ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները: Նախ՝ նրանք տարեսկզբին ֆակուլտետի խորհրդի հաստատմանն են ներկայացնում իրենց աշխատանքային պլանները(Տես՝ ֆակուլտետի խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 2 արձանագրությունը և 2018թ. հոկտեմբերի 29-ի թիվ 2 արձանագրությունը), որոնք կառուցվում են ուսանողների կարիքների հիման վրա, ֆակուլտետի խորհրդի նիստերում ուսանողները մասնակցում են քննարկումների, հանդես գալիս առաջարկություններով: Այսպես օրինակ, ֆակուլտետի խորհրդի 2018թ. թիվ 3 նիստում (Տես՝ ֆակուլտետի խորհրդի թիվ 3 նիստի արձանագրությունը) ուսանողական խորհրդի նախագահի կողմից հարց բարձրացվեց վերանայել արդեն 3 տարի անընդմեջ ֆակուլտետի ուսումնական գործընթացը երկրորդ հերթափոխով կազմակերպելու հարցը, ինչը տարաբնույթ դժվարություններ է ստեղծում շրջաններում ապրող ուսանողների, դպրոցում երկարօրյայում կամավոր աշխատող ուսանողների համար: Որոշվեց ուսումնական պարապմունքների հերթափոխման հարցը ամեն տարի ֆակուլտետների փոխատեղման սկզբունքով լուծելու առաջարկով՝ դիմել համալսարանի ուսումնական գործընթացների կառավարման բաժնի:

2.Ուսանողների կարիքներին ուղղված հարցումների կազմակերպում և արդյունքների վերլուծության հիման վրա գործողությունների, քայլերի մշակում: Այսպես, սկզբնական կրթության ֆակուլտետի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա, Մանկավարժական հոգեբանություն մագիստրոսի կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների շրջանում 2018թ. մայիս-հունիս ամիսներին իրականացվել է մասնագիտական կրթական ծրագրից ուսանողների բավարարվածության գնահատման հարցում: Արդյունքները ներկայացվել և քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստում, ուղարկվել ամբիոններ համապատասխան քայլեր կատարելու նպատակով (Տես՝ ֆակուլտետի խորհրդի 2018 թվականի հուլիսի 7-ի թիվ 11 նիստի արձանագրությունը): Ուսանողների կարիքների ուսումնասիրություն է իրականացվում նաև մանկավարժական պրակտիկաներից առաջ և հետո: Յուրաքանչյուր պրակտիկայի շրջափուլից առաջ և հետո կազմակերպվող կոնֆերանսների ընթացքում ուսանողներին ներկայացվում է տվյալ փուլի կազմակերպման, բովանդակության հարցերը, քննարկվում են ուսանողների կողմից ներկայացված հարցերը, նախորդ փուլերի ընթացքում գրանցված խնդիրներն ու դրանց լուծման ճանապարհները:

3. Պարբերական շրջայցեր և հանդիպումներ ուսանողների հետ. Դեկանի կողմից պարբերական շրջայցեր և հանդիպումներ ուսանողների հետ, որտեղ բացահայտվում են առկա խնդիրները: Այսպես՝ սեպտեմբերյան շրջայցերի ժամանակ 1-ին կուրսերի ուսանողները ցանկություն հայտնեցին առավել մանրամասն ծանոթանալ համալսարանում գործող միջազգային ծրագրերին, ամառային դպրոցին:

Ս/թ հոկտեմբերի 9-ին ֆակուլտետի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար կազմակերպվեց հանդիպում Erasmus Plus կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ֆինլանդիայի Օուլու համալսարանում 1 կիսամյակ ուսանած ուսանողներ Լիլիթ Խալաթյանի և Մերի Պողոսյանի հետ (PPT ներկայացում, հարց ու պատասխան):

4.Յանդիպումներ և քննարկումներ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչների հետ:

Արտաքին շահակիցների կարիքների բացահայտման ուղիները.

1.Դպրոցների և նախադպրոցական կրթական հաստատությունների մանկավարժների ներկայացվածությունը որպես անդամ ֆակուլտետի խորհրդի կազմում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում, նրանց դիտարկումների և հաշվետվությունների քննարկում ֆակուլտետի խորհրդի նիստերում, նրանց մասնակցություն մագիստրոսական թեզերի պաշտպանությանը:

2.Այցեր Երևանի և ՅՅ մարզերի կրթական հաստատություններ. 2018 թվականի փետրվար-մարտ ամիսներին մարզային հանդիպումներ, սեմինար-քննարկումներ մարզային կրթության վարչության ներկայացուցիչների և ավագ, միջնակարգ դպրոցներ տնօրենների հետ, մանկավարժների հետ դպրոցների մանկավարժական կոլեկտիվների հետ (Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի մարզեր), շուրջ 30 այց Երևանի և մարզերի դպրոցներ, միջին մասնագիտական հաստատություններ (Տես՝ ֆակուլտետի համալսարան գործատու խմբի պատասխանատուի հաշվետվությունները խորհրդի նիստերին, դեկանի հաշվետվությունները ռեկտորատի նիստերին և այցելությունների գրաֆիկները.2018թ.):

3.Յանդիպումներ և քննարկումներ կրթական հաստատությունների տնօրենների, վարիչների, կրթության ոլորտի պատասխանատուների հետ (Տես «Դպրոց-բուհ միասնական պահանջներ և արդյունավետ համագործակցություն» սեմինար-քննարկումներ. 2018թ. նոյեմբեր):

4.Մանկավարժական պրակտիկայի բազաներ հանդիսացող կրթական հաստատությունների հետ համատեղ բովանդակային աշխատանքների առցանց քննարկումներ նաև Google-classroom կրթական հարթակում:

5.Սկզբնական կրթության հիմնախնդիրներին նվիրված ամենամյա գիտաժողովներին, սեմինար-քննարկումներին արտաքին շահակիցների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների հրավիրում(Տես՝ «Սկզբնական կրթության հիմնախնդիրները» ուսանողական գիտաժողով 2018թ. ապրիլ, սեմինար-քննարկում սկզբնական կրթության հայեցակարգի ստեղծման վերաբերյալ. նախատեսված 2018թվականի դեկտեմբերին):

Ուսանողների՝ կրթական ծրագրերի բավարարվածության բացահայտմանն ուղղված ուսումնառության արդյունքների վերլուծության հիման վրա սկզբնական կրթության ֆակուլտետի և ֆակուլտետի ամբիոնների իրականացրած գործողությունները, արտաքին շահակիցների կարիքների բացահայտման ուղիները:

Արդյունքում՝ ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների պլաններում կատարվել են փոփոխություններ, վերանայվել են դասընթացների առարկայական նկարագրերն ու վերջնարդյունքները, նկարագրերում առկա առաջադրանքները համապատասխանեցվել են վերջնարդյունքներին:

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է աշխատանքներ իր առաքելության ու նպատակների իրականացման գնահատման և բարելավման ուղղությամբ:

Ֆակուլտետի ռազմավարական ծրագրի շուրջ աշխատանքներն իրականացվել են ամբիոնների դասախոսների ներգրավմամբ: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակմանը ներգրավված են եղել ֆակուլտետի որակի ապահովման խմբի անդամները, ինչպես նաև ուսանողներ: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակման աշխատանքներին ներգրավված ուսանողներն ու դասախոսները առաջնորդվել են դասախոսների և ուսանողների շրջանում կատարած բանավոր հարցումների հիման վրա:

Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի հիմնական ուղղություններն ու դրանց շուրջ կատարվող աշխատանքները քննարկվել են ամբիոնների նիստերին (Տես՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 20.06.2018թ. թիվ 12 արձ., Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11.04.2018թ. նիստի թիվ 7 արձ., Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի 17.05.2018թ. թիվ 9 արձ.):

Ռազմավարական ծրագրի պլանի գործողությունների պլանի իրագործման ընթացքը քննարկվել և գնահատվել է ֆակուլտետի խորհրդի նիստերում (Տես՝ 2018թ. հուլիսի 4-ի նիստի թիվ 11 արձագրություն):

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆակուլտետի կառավարման համակարգն ապահովում է կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Ֆակուլտետը հաշվետու տարում դասախոսներին և ուսանողներին իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն է քննադատել:

Ֆակուլտետի խորհրդի նիստերում քննարկվող բոլոր հարցերին, որոշումների կայացմանը դասախոսները և ուսանողները տեղեկանում են խորհրդի կազմում ընդգրկված իրենց ներկայացուցիչների միջոցով (Տես՝ 2018-2019 ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի կազմը), ինչպես նաև իրենց հուզող հարցերը բարձրացվում են ամբիոնային նիստերի, ուսանողների պարագայում՝ ուսանողական խորհրդի նիստերի ժամանակ, այնտեղից էլ՝ առաջարկությունների տեսքով՝ ֆակուլտետի խորհուրդ, ապա նաև համալսարանի համապատասխան կառույցներ (Տես՝ 2017-2018 ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի մարտի 28-ի նիստի թիվ 6 արձանագրությունը):

Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկաների ամբիոնի առաջարկությունը՝ «Երեխայի խնամք և դաստիարակությունը ընտանիքում» վճարովի մասնագիտական դասընթաց կազմակերպելու վերաբերյալ):

Օգտագործվում են տեղեկատվության բոլոր հնարավոր եղանակները (Google classroom էլեկտրոնային կրթական հարթակ, համալսարանի կայքէջ, Facebook-յան էջեր, հեռուստացույց, հայտարարությունների տախտակ, ներքին գրություններ...) համալսարանական կյանքին և ֆակուլտետին առնչվող բոլոր տեղեկատվությունը դասախոսներին և ուսանողներին ժամանակին տրամադրելու համար:

Կազմակերպվում են նաև ֆակուլտետի ընդլայնված նիստեր (Տես՝ 2018թ. հունիսի 22-ի թիվ 9 նիստի արձանագրությունը, 2018թ. նոյեմբերի 20-ի նիստի թիվ 4 արձանագրությունը,) և սեմինարներ (Տես՝ սեմինարների ներկայաթերթիկներ. 2018թ. հոկտեմբերի 10.«Ինչպես կազմակերպել հետազոտական աշխատանքները», 2018թ. նոյեմբերի 8. «Ինչպես իրականացնել մագիստրոսների մանկավարժափետազոտական պրակտիկան մանկապարտեզներում և դպրոցներում»), մասնակցություն և զեկուցումներ ամբիոնային նիստերին (Տես ամբիոնային նիստերի և հանդիպումների օրակարգեր, ներկայաթերթիկներ. 2018թ. նոյեմբերի 2, 2018թ. նոյեմբերի 7, նոյեմբերի 15)՝ ֆակուլտետի գործունեությանն առնչվող հարցերում թափանցիկությունն ապահովելու և հուզող հարցերը համատեղ քննարկելու համար:

Ֆակուլտետը հաշվետու տարում իր նպատակներին համապատասխան մշակել և իրականացրել է այլանաժողովում, մշտադիտարկել իր մեխանիզմներով:

Ֆակուլտետի նպատակներն ու խնդիրները պայմանավորված են ՀՀ ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություններով և սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանով: Այդ աշխատանքների ուղղությամբ տարվող աշխատանքները քննարկվում են ամբիոնների նիստերում, ինչպես նաև ֆակուլտետի խորհրդի նիստերում: Աշխատանքների արդյունավետությունը գնահատվում է հետադարձ կապի և մշտադիտարկումների միջոցով: Մշտադիտարկումների արդյունքները քննարկվում են ամբիոնային և ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում, խնդրո առարկա հարցերի բարելավման ուղղությամբ արվում առաջարկություններ (առաջարկությունները ներկայացվում են հաշվետվությունների և զեկույցների, էլույթների տեսքով), վերջիններս էլ ներկայացվում են համալսարանի համապատասխան կառույցներ, (Տես՝ 2018թ. հոկտեմբերի 1-ի խորհրդի նիստի թիվ 1 արձանագրությունը, «Գնահատման մոտեցումներ և կշիռներ» առաջարկությունը. 2018թ. հոկտեմբերի 3), տեղադրվում Google classroom էլեկտրոնային կրթական հարթակում:

Այսպես օրինակ՝ մանկավարժական պրակտիկաների կազմակերպումը. նախապատրաստական կազմակերպչական և բովանդակային սեմինար քննարկումներ ուսանողների, մեթոդիստների դպրոցների ներկայացուցիչների մասնակցությամբ,

• պրակտիկայի ընթացքում այցեր դպրոցներ, հանդիպումներ, քննարկումներ, • ընթացքի, բովանդակության բարելավման ուղղությամբ, առաջացած խնդիրների վերաբերյալ պրակտիկայի ղեկավարների պարբերական հաշվետվություններ ամբիոնային և ֆակուլտետի խորհրդի նիստերին,

• պրակտիկայի ավարտին՝ ամփոփիչ սեմինարների կազմակերպում, • թղթապանակների պաշտպանություն,

• արդյունքների վերլուծությունների հիման վրա առաջարկությունների ձևակերպում և ամփոփիչ հաշվետվության ներկայացում (Տես՝ սեմինարների, հանդիպում-քննարկումների ներկայաթերթիկներ. 2018թ. փետրվարի 13, մարտի 17, սեպտեմբերի 11, հոկտեմբերի 4, նոյեմբերի 8, ֆակուլտետի խորհրդի 2018 թվականի արձանագրություններ):

Ֆակուլտետի խորհրդի տարեվերջյան նիստին խորհրդի նախագահը ներկայացնում է հաշվետվություն խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին (Տես՝ Ֆակուլտետի խորհրդի նիստի տարեվերջյան հաշվետվությունը):

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը և դրանց մշտադիտարկման բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները որքանով են համապատասխանում մասնագիտական որակավորմանը՝ ըստ շտրիվոդ որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Ֆակուլտետը սերտ համագործակցում է ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ: Ֆակուլտետի դասախոսները մասնակցում են վարչության կողմից կազմակերպվող սեմինարներին, ծանթանում վարչության կայքում տեղ գտած փոփոխություններին:

1. ՄԿԾ-ների բարելավման և վերանայման ուղղությամբ ֆակուլտետում ձևավորվել են աշխատանքային խմբեր, որտեղ ընդգրկվել են արտաքին և ներքին շահակիցներ: Աշխատանքային խմբերը վերանայել են ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերն ու ուսումնական պլանները, դրանք համապատասխանեցրել որակավորումների ազգային շրջանակի պահանջներին: Մասնագրերը, ուսումնական պլանները հաստատվել են ֆակուլտետի խորհրդում, համալսարանի գիտական խորհրդում, դրանք նաև տեղադրվել է առցանց տարածքում Google.docs ձևաչափով (Տես՝ 2017-2018 ուսումնական տարվա թիվ 2, թիվ 8, թիվ 11 նիստերի արձանագրությունները):

2. Մասնագրերին համապատասխան դասախոսների կողմից վերանայվել են բոլոր դասընթացների առարկայական նկարագրերը՝ դրանք համապատասխանեցնելով կրթական ծրագրի վերջնարդյունքներին:

3. Վերափոխվել են նաև առանձին դասընթացների բովանդակային բաղադրիչները՝ տարրական դասարաններում ուսումնական մի շարք առարկաներում ձեռնարկատիրական կրթության և ֆինանսական կրթության բաղադրիչների ինտեգրման համատեքստում. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի «Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա», «Ես և շրջապատող աշխարհը», «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» դասընթացի նկարագրերն ու համապատասխանաբար ուսումնական փաթեթները (Տես՝ նշված դասընթացների ԱՌԽՓ-ները):

4. Մշակվել են մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկայի առարկայական նկարագրերը (Տես՝ առարկայական նկարագիրը, տեղադրված նաև Google-classroom կրթական հարթակում, սեմինար քննարկումների օրակարգեր, ներկայաթերթիկներ 2018թ. մարտի 17, 2018թ. նոյեմբերի 8):

Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

1. Ֆակուլտետի խորհրդի նիստերում դասավանդման մոտեցումների և մեթոդների արդիականացման ուղղված պարբերական քննարկումներ որակի ապահովմանն առնչվող հարցի ներկայացման ժամանակ:

2. Ամբիոնների վարիչների կողմից իրականացվող դասալսումներ (Տես՝ դասալսումների մատյաններ, նիստերի արձանագրություններ) և արդյունքների վերլուծություններ:

3. Պրակտիկաների ամփոփիչ կոնֆերանսներին, մանկավարժական պրակտիկաների թղթապանակների պաշտպանության ընթացքում կիրառված, նաև մշակված մեթոդների ներկայացում և գնահատում: Դրանց տեղադրումը Google-classroom կրթական հարթակում:

4. Ամբիոնային սեմինարներ դասավանդման մեթոդների, նրանց արդյունավետության վերաբերյալ:

Ուսանողների գնահատման համակարգը ֆակուլտետում, գնահատման բաղադրիչները և ակադեմիական ազնվությունը հաշվետու տարում:

Գնահատման համակարգի, բաղադրիչների, չափանիշների հարցերը քննարկվում են ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Այսպես, նորից վերանայվել և 2018-19 ուսումնական տարվանից կիրառության մեջ են դրվել մագիստրոսների աշխատանքային պլանները, որոնք հստակեցնում են նաև ուսումնական պլանով նախատեսված հետազոտական բաղադրիչի գնահատման պահանջները, քննարկվել և առաջարկություններ են ներկայացվել գնահատման բազմագործոն բաղադրիչները և դրանց համար նախատեսված կշիռները:

մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան մշակվել է դասընթացների համար տարբերակված գնահատման ձևեր (Տես՝ 2018--2019 ուստարվա ֆակուլտետի խորհրդի թիվ 1 արձանագրություն): Նկատի ունենալով ընթացիկ գնահատման մեթոդաբանությունը՝ ինչը ենթադրում է ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, ուսանողի ակտիվությունը և ուսումնական գործունեության գնահատումը միջանկյալ գնահատականների միջև ընկած ժամանակահատվածում, ֆակուլտետն առաջարկել է նաև ընթացիկ գնահատման ձևին տրվող թվային, բալային տարբերակից անցնել խոսքային տարբերակի՝ ստուգված-չստուգված:

(Տես՝ ֆակուլտետի առաջարկությունները.24.11.2018թ.):

Գրագողության դեմ պայքարի նպատակով մագիստրատուրայում սովորող ուսանողները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում են հաշվետվություն կատարած աշխատանքների մասին: Գրագողության բացառմանը նպաստում են նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը, որոնք ստիպում են ուսանողին ինքնուրույն հետազոտություն անել: Այս հարցին նվիրված հատուկ ամբիոնային նիստեր են կազմակերպվում, թեմաների ձևակերպման և հաստատման հարցը մի քանի անգամ լսվում, որից հետո նոր հաստատվում է ֆակուլտետի խորհրդի նիստում ((Տես՝ 2018-19 ուստարվա ֆակուլտետի խորհրդի թիվ 1, թիվ 3 արձանագրությունները):

Ֆակուլտետի աշխատանքները մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու, ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների: Ֆակուլտետի ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերին համահունչ աշխատանքներ: Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորություններն ապահովող և պարզաբանող մոտեցումներ:

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ֆակուլտետի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանով է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

ՄԿԾ-ների վերանայման ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը, կրթական ծրագրերը համեմատվել են այլ երկրների կրթական ծրագրերի հետ. Ֆինլանդիայի Օուլու համալսարան, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան մանկավարժական համալսարան, Մինսկի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարան. : Ուսումնական պլաններում ներառված առարկաները համապատասխանեցվել են տարբեր երկրներում նույն ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունների պլանների հետ:

Դրա շնորհիվ ֆակուլտետը կարողանում է իրականացնել՝

- ուսանողների փոխանակում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ (Erasmus Plus կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում՝ 2017-2018 ուստարում՝ 4 ուսանող, 2018-19 ուստարի 1-ին կիսամյակ՝ 2 ուսանող),
- հետազոտությունների իրականացում (2017-18, 2018-19 ուստարիներին Կիլեի համալսարանում(Մեծ Բրիտանիա). Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ L. Աբրեյան),
- ուսանողների ավարտական աշխատանքների փոխադարձ գրախոսում (7 աշխատանք),
- մագիստրոսական թեզերի համադեկավարում (2 մագիստրոսական թեզ),
- պլանավորել և պայմանավորվածություն ձեռք բերել առաջիկայում մանկավարժական պրակտիկաների կազմակերպման ուղղությամբ (Մինսկի Մաքսիմ Տանկի անվան մանկավարժական համալսարան),
- դասախոսների փոխադարձ այցելություններ (Erasmus Plus ծրագրի շրջանակներում սկզբնական կրթության ֆակուլտետի դեկանի տեղակալ Արմինե Դալլաքյանի այցը Ֆինլանդիայի Օուլու համալսարան.2018 թվական մայիս),
- դասախոսների վերապատրաստումներ(2018թ. մայիս վերապատրաստում Ֆինլանդիայի Օուլու համալսարանում.սկզբնական կրթության ֆակուլտետի փոխդեկան Լուսինե Պողոսյան,Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Մարիաննա Ամիրոյան),
- դասախոսների մասնակցություն գիտաժողովների և սեմինարների(2018 թ. նոյեմբեր Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարան. Նախադպրոցական կրթության հիմնահարցերին նվիրված սեմինարներ. Նախադպրոցական մանկավարժություն և

մեթոդիկաների ամբիոնի դասախոսներ Մարիաննա Ամիրադյան, Արևիկ Խուզեյան),

- համատեղ ցանցային կրթական ծրագրերի իրականացում (Տես՝ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի զեկուցագիրը ցանցային կրթական ծրագիր Մինսկի և Սանկտ-Պետերբուրգի պետական մանկավարժական համալսարանների հետ իրականացնելու վերաբերյալ. 15.10.2018թ.):

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման աշխատանքները:

Ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում պարբերաբար իրականացվել են կրթական ծրագրերի մշտադիտարկում՝ առաջնորդվելով ՀՊՄՅ և սկզբնական կրթության ֆակուլտետի 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանով, որակի ապահովման չափանիշներով և չափորոշիչներով, ինչպես նաև վերլուծելով միջազգային առաջավոր փորձը: Կրթական ծրագրերի մշտադիտարկումն իրականացվել է ՀՊՄՅ կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի հիման վրա: /Տես՝ ՀՊՄՅ կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ, հաստատված 2012 թ. Համալսարանի գիտխորհրդի սեպտեմբերի 20-ի նիստում/: Կրթական ծրագրերի մշտադիտարկումն իրականացվել է տարվա ընթացքում ամբիոնի վարիչների կողմից: Հաշվետու ժամանակաշրջանում սկզբնական կրթության ֆակուլտետի կողմից մշտադիտարկումներն իրականացվել են դասալսումների, դասախոսների և ուսանողների հետ իրականացրած խորհրդատվությունների, մնացորդային գիտելիքների ստուգման միջոցով /վերջինս իրականացվել է մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից, արդյունքները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստում (Տես՝ 2017թ. հոկտեմբերի 29-ի թիվ 2 նիստի արձանագրություն), 2018թվականի դեկտեմբերին նախատեսված է մնացորդային գիտելիքների ստուգում ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի մասնագիտական առարկաներից.3-րդ կուրսեր (Տես՝ 2018թ. նոյեմբերի 28-ի թիվ 4 արձանագրություն):

Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնային նիստերին, կատարվում են առաջարկություններ: Դրանց հիման վրա բովանդակային փոփոխություններ են կատարվում տարբեր առարկաների դասավանդման, բովանդակության մեջ:

Կրթական ծրագրերի մշտադիտարկման նպատակով խորը վերլուծության են ենթարկվում նաև մանկավարժական պրակտիկայի արդյունքները, ուսանողների ցուցաբերած գիտելիքերը, կոմպետենցիաները: Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացքում քննարկումներ են կազմակերպվում նաև պրակտիկաների բազաների ներկայացուցիչների հետ՝ նրանց կարիքները բացահայտելու, գործատուի պահանջներին համապատասխան կադրեր պատրաստելու նպատակով: Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ընթացքն ու արդյունքները պարբերաբար քննարկվում են ինչպես ամբիոնի նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում: Քննարկման արդյունքում փոփոխություններ են կատարվում դասավանդվող առարկաների բովանդակության, ինչպես նաև դրանց վերջնաարդյունքների մեջ (Տես՝ 2018-19 ուստարվա 1-ին կիսամյակի խորհրդի նիստերի արձանագրությունները, Մանկավարժական պրակտիկաների ընթացքի և արդյունքների վերաբերյալ պրակտիկայի ղեկավարների հաշվետվությունները): Մշտադիտարկման արդյունքների հիման վրա փոփոխություններ և համալրումներ են կատարվում ուսանողների կողմից ընտրվող դասընթացների ցանկում: Այդ նպատակով ամբիոններում ստեղծվել են ընտրովի դասընթացների բազա, որը հնարավորություն է տալիս հետևել գիտության մեջ առկա նորություններին և դրանք հասանելի դարձնել ուսանողների համար:

Դպրոց-բուհ կրթության հիմնախնդիրներին նվիրված հանդիպումներ և քննարկումներ կրթական հաստատությունների տնօրենների, վարիչների հետ (Տես «Դպրոց-բուհ միասնական պահանջներ և արդյունավետ համագործակցություն» սեմինար-քննարկումներ. 2018թ. հոկտեմբեր-նոյեմբեր):

Ֆակուլտետը նախաձեռնում է Google Forms հավելվածի միջոցով իրականացնել շրջանավարտների հարցում՝ ծրագրերի բավարարվածության վերաբերյալ: Հարցման արդյունքների հիման վրա դրանցում կկատարվեն բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ: Հարցման արդյունքների վերլուծության հիման վրա մշակվել են առաջարկություններ, որոնք ներկայացվել են ամբիոններին՝ առարկաների վերջնաարդյունքներում, գնահատման ձևերում, դասընթացների բովանդակության մեջ փոփոխություններ կատարելու նպատակով: Հարցում է կատարվել նաև «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 1-ին կուրսում դասավանդվող «Մանկավարժական վալեոլոգիա» առարկայի դասավանդման արդյունավետությունը վերհանելու նպատակով (դասախոս Լ.Պողոսյան): Արդյունքները քննարկվել են Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի նիստի ընթացքում: Այդ ուսումնասիրության հիման վրա

փոփոխության են ենթարկվել ինչպես առարկայի վերջնարդյունքները, այնպես էլ դասավանդման մեթոդները:

ՄԿԾ-ի արդյունավետությունը ապահովելու նպատակով իրականացվել է բուհում դասավանդվող առարկաների և դպրոցի առարկաների և չափորոշիչների համեմատություն և համապատասխանեցում (Տես՝ ՀՊՄՐ Google docs-ում տեղադրված ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը):

ՄԿԾ- ները վերանայելու ընթացքում «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների կրթական ելքային արդյունքների համապատասխանեցվել են որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներին (Տես՝ ՀՊՄՐ Google docs-ում տեղադրված ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը):

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:			
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:			
Բակալավրի	առկա	355	
	հեռակա	471	
Մագիստրոսի	առկա	121	
	հեռակա	174	
Ընհանուր ուսանողների թիվը		1121	
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով			
Ուսանողների արտահոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	Ռուսաստան	1	
2	Այլ բուհ	1	
Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	ԵՊՀ	1	
2	Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի պետական քոլեջ	3	
3	Արարատի պետական քոլեջ	6	
4	Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ	1	
5	Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ	4	
6	Երևանի պետական արդյունաբերական քոլեջ	2	
7	Աբովյանի պետական ճարտարագիտական քոլեջ	2	
8	Աբովյանի պետական քոլեջ	1	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	1.6% - առկա 4.18%-հեռակա	8 - առկա 27 -հեռակա
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	1.47% - առկա 2.6% - հեռակա	7 - առկա 17- հեռակա
3	Իր դիմումի համաձայն ազատված և հետագայում վերականգնման նպատակով ուսանողներ	0.84% - առկա 2.33%-հեռակա	4 - առկա 15 -հեռակա

Ֆակուլտետի ուսանողների հավաքագրման նպատակով ֆակուլտետում գործում է դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խումբ, որը պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում ֆակուլտետի խորհրդի նիստերին: Այս ուղղությամբ իրականացվում են մի շարք աշխատանքներ.

- 1.Այցեր Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներ և միջին մասնագիտական կրթական հաստատություններ (Տես՝ 2018թ. դեկանի հաշվետվությունները ռեկտորատի նիստերին և այցելությունների գրաֆիկները, ֆակուլտետի խորհրդի նիստերին պատասխանատուների հաշվետվությունները):
- 2.Մանկավարժական պրակտիկայի բազաներ հանդիսացող կրթական հաստատությունների հետ համատեղ բովանդակային աշխատանքների իրականացում, քննարկումներ նաև Googl-classroom

կրթական հարթակում:
 3.Սկզբնական կրթության հիմնախնդիրներին նվիրված ամենամյա գիտաժողովների կազմակերպում և կրթական հաստատությունների ներկայացուցիչների հրավիրում (Stu` «Սկզբնական կրթության հիմնախնդիրները» ուսանողական գիտաժողով 2018թ. ապրիլ):
 4. Ավագ դպրոցի աշակերտների բուհ, ֆակուլտետ այցերի կազմակերպում. ծանոթացում բուհի և ֆակուլտետի հետ, մասնակցություն պարապմունքներին, տարաբնույթ միջոցառումների, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված սեմինարների կազմակերպում (Stu` սեմինարների օրակարգեր և ներկայաթերթիկներ, համալսարանի կայքում այցերի և հանդիպումների լուսաբանումներ):
 5. Ֆակուլտետի ուսանողների կամավորական աշխատանքը դպրոցներում` որպես մոտիվացիա, որպես մասնագիտությունը ներկայացնելու լավագույն օրինակ (Stu` Google classroom կրթական հարթակում բացված «Աշխատող կամավորներ» դասընթաց-էջը), ամառային ճամբարներում:
 6. Օլիմպիադաների կազմակերպում և աշակերտներին մրցանակների տրամադրում (2017թ. մայիսի 5` Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ լավագույն ստեղծագործությունների մրցույթ. լուսաբանումները համալսարանի կայքէջում)
 7.Մեդիա միջոցների օգտագործում. «Հաջողության բանաձև» հաղորդաշար հեռուստատեսությամբ, «Մանկավարժական համալսարան» թերթ, ռադիո «Ֆամա» ընդունելության վերաբերյալ տեղեկատվության տեղադրում համալսարանի և ֆակուլտետի կայքէջում, ֆակուլտետի ձեռքբերումների, ուսանողների հաջողությունների ներկայացում, քննարկումների կազմակերպում սոցցանցերում, Facebook-յան էջերում (Stu` ֆակուլտետի դասախոսների, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, կամավորական գործունեության վերաբերյալ Facebook-յան էջերը), նամակ-հրավերքների տրամադրում ՀՀ կրթության վարչություններին, տեղեկատվական նամակների, ֆակուլտետի ուսանողների ձեռքի աշխատանքների, համալսարանի և ֆակուլտետի բուկլետների, բացիկների տարածում Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներում, կրթական և հասարակական կազմակերպություններում:
 8. Ֆակուլտետի ուսանողների և դասախոսների` դիմորդների ուղղորդմանն ուղղված անհատական աշխատանքներ:
 Հարկ է նշել սակայն, որ գնալով նվազում է Ե Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագիր դիմորդների թիվը` պայմանավորված մի շարք օբյեկտիվ հանգամանքներով:
 Ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետության մեխանիզմների մասին կարող է վկայել 2018-2019 ուստարվա դիմորդների թիվը (Stu` aspu.am «Դիմորդ» էջը): Նշելի է նաև, որ բավականին թվով միջին մասնագիտական կրթական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտներ են իրենց ուսումնառությունը ցանկանում շարունակել ֆակուլտետի համապատասխան կրթական ծրագրերով (2018-2019 ուստարում` 19 դիմորդ):

Հեռացում.
 1.ուսման անբավարար առաջադիմություն
 3.ուսման վարձի պարտք
 Վերականգնում.
 1.կրթությունը շարունակելու և բարձրագույն կրթություն ստանալու ցանկություն
 2.աշխատաշուկայում պահանջված մասնագիտությամբ աշխատանք ունենալու հեռանկար
 3.համալսարանում անհրաժեշտ մեխանիզմների առկայություն վերականգնվելու համար

Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		4
Մագիստրոս		8
Ընդհանուր		
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1	«Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին	16

	համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով»	
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	Педагогическая практика как основной путь формирования профессиональной компетентности будущих учителей (на основе опыта факультета начального образования АГПУ им.Х.Абовяна)	1
2	Շախմատի ուսուցիչների վերապատրաստման արդյունքների վերլուծություն (մինչև տարեվերջ տպագրվող)	1
3	Տեսողական խանգարում ունեցող երեխաների շախմատի ուսուցման դժվարությունները հատուկ դպրոցներում (մինչև տարեվերջ տպագրվող)	1
4	Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ստեղծարարության մակարդակի և շախմատային առաջադիմության համեմատական վերլուծություն (մինչև տարեվերջ տպագրվող)	1
5	Մարդու իրավունքների դիտարկումը Հովհաննես Թումանյանի <<Չարի վերջը>> ստեղծագործության ուսումնասիրման գործընթացում:	1
6	Համեմատությունները և փոխհարաբերությունները որպես կրտսեր դպրոցականի ստեղծագործական մտքի դրսևորման միջոց. ուսումնասիրման մեթոդիկան:	1

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

<p>Ֆակուլտետում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության՝ ՀՊՄՔ քաղաքականությանը համապատասխան հստակ մոտեցումներ :</p> <p>Ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում աշխատում են համապատասխան որակավորում ունեցող դասախոսներ.</p> <ul style="list-style-type: none"> · 1 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, · 6 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր · 1 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր · 1 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր պ/պ · 24 գիտությունների թեկնածու, դոցենտ · 6 ասիստենտ · 9 դասախոս · 1 գիտությունների թեկնածու, ասիստենտ · 1 դոցենտ · 3 գիտությունների թեկնածու, դասախոս: /Տե՛ս ամբիոնների բաշխման գրությունները/: <p>Ամբիոններում աշխատանքներ են իրականացվում դասախոսների մասնագիտական գիտական ներուժը կատարելագործելու ուղղությամբ: Ամբիոններում կազմակերպվում են սեմինարներ, որոնց ընթացքում քննարկվում են ժամանակակից գիտության նվաճումները, նորարարությունները, տվյալ բնագավառի հետազոտության արդյունքները /Տե՛ս ամբիոնների նիստերի արձանագրություններ/, ամբիոնային նիստերում քննարկվում են նաև փոխադարձ դասալուսման արդյունքները:</p> <p>Դասախոսների կատարած աշխատանքների արդյունավետությունը և համապատասխանությունը համալսարանի և ֆակուլտետի ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություններին քննարկում է ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Հիմնական հարցը, որը շատ հաճախ շոշափվում է՝ դասավանդման մեթոդների, առարկայական վերջնարդյունքների, գնահատման ձևերի համապատասխանեցման հարցն է, որն արդյունավետ և որակյալ կրթության ապահովման գրավականն է:</p> <p>Ֆակուլտետի դասախոսներն ընդգրկված են «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման</p>
--

միջոցով» դրամաշնորհային ծրագրին, որը ենթադրում է տեղեկատվական և հաղորդակցական կարողությունների զարգացում, այդ հմտությունների կիրառում հետազոտությունների և դասավանդման գործընթացներում: «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացվող «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում մշակվել են վերապատրաստման մոդուլներ ֆակուլտետի դասախոսների համար: Վերապատրաստումներն իրականացվելու են երկու ուղղություններով՝ ծանոթացում որակական և քանակական հետազոտության մեթոդների և համակարգչային Adobe ծրագրի հետ: Դրանք նախատեսված է իրականացնել 2019թ. փետրվարին:

Դասախոսների կատարելագործմանն են ուղղված նաև՝

- ներամբիոնային սեմինարները և գիտական լսումները, ֆակուլտետային սեմինարները (Stu` ԶՊՄՐ Google docs-ում տեղադրված ամբիոնային սեմինարների ժամանակացույցերը, մանկավարժական պրակտիկաների, դասընթացների նկարագրերի և բովանդակության բարելավում ...):

- համագործակցող համալսարանների մասնագետների կողմից դասախոսների համար դասախոսություններն ու վարպետած դասերը. 17-18.05.2018թ. դասախոսություններ ֆինլանդիայի Օուլու համալսարանի կրթության ֆակուլտետի դասախոս Պիրիո Սուվիլետոյի կողմից, (Stu համապատասխան օրակարգերը, ներկայաթերթիկները),

- պարբերաբար իրականացվող դասալսումները, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում,

- վերապատրաստումները (1 ասպիրանտ՝ Մեծ Բրիտանիա, Կիլե համալսարան, ֆակուլտետի 2 փոխդեկանների վերապատրաստումը ֆինլանդիայի Օուլու համալսարանում 2018թ. մայիսի 6-11-ը),

- ներֆակուլտետային սեմինարները՝ նոր մասնագրերի և առարկայական նկարագրերի բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ,

Դասախոսներին հետաքրքրող տարաբնույթ տեսական և մեթոդական հարցերի շուրջ կազմակերպվել են ամբիոնային գիտամեթոդական սեմինարներ: Կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման ուղղությամբ ծանոթացում հետազոտական մեթոդների, հետազոտությունների կազմակերպման ընթացքի, հետազոտության տեսակների միջազգային փորձի հետ (Stu՝ Մայրենիի և Նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2018թ. հունվարի նիստի արձանագրություն, 2018թ. մայիսի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի սեմինարի նյութեր. 2եկ.՝ Լ.Պողոսյան): Ֆակուլտետի ամբիոնների բոլոր դասախոսները ներգրավված են Google Classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում: Հարթակում տեղադրված են ամբիոնների բոլոր առարկաների ԱՌԲՄՓ-ները:

Հաշվետու տարում դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման աշխատանքները ֆակուլտետում:

Հաշվետու տարում դասախոսների աշխատանքի գնահատումն իրականացվել է տարբեր մեխանիզմներով, որոնց մեջ կարևորում ենք ամբիոնների կողմից իրականացված դասալսումները: Դասալսումների արդյունքների, կատարված դիտարկումների հիման վրա դուրս են բերվել այն հիմնական ուղղությունները, որոնց շուրջ ամբիոններն աշխատելու կարիք ունեն: Դրանք հիմնականում կապված են դասավանդման նոր մեթոդների ներդրման խնդիրներին, ինչպես նաև նույն առարկան դասավանդող դասախոսների առաջավոր մանկավարժական փորձի փոխանցմանը մեկը մյուսին:

Բոլոր ամբիոններում առկա է դասախոսի թղթապանակ, որի հիմնական նպատակն է դասախոսի մասնագիտական որակների պարբերական գնահատումը: Թղթապանակում, որպես կանոն, ներառվում են դասախոսի անհատական ուսումնական պլանը, իր կողմից դասավանդվող առարկաների նկարագրերը և մեթոդական փաթեթները, մեթոդական և մանկավարժական գործունեության արդյունքները, գիտահետազոտական աշխատանքների մասին վավերացված տեղեկությունները, համալսարանի գործունեության տարբեր ոլորտներում իրականացված աշխատանքների վկայությունները, տարեկան հաշվետվությունները, մասնագիտական փորձառությանն առնչվող, մասնագիտական որակները բնութագրող փաստաթղթերն ու նյութերը, դասալսումների, պրակտիկաների դիտարկման արդյունքները: Թղթապանակը տարեկան մեկ անգամ ենթակա է գնահատման ամբիոնի վարիչի, այդ թվում նաև գործընկերների կողմից:

Դասախոսի գնահատման արդյունավետ միջոց է նաև հարցումների իրականացումը ուսանողության շրջանում, որի պրակտիկան ֆակուլտետն արդեն ունի (Stu՝ ֆակուլտետի կրթական ծրագրերը ենթակետը):

Որպես դասախոսների գնահատման մեխանիզմ իրականացվում է դասախոսի գործունեության

ինքնավերլուծություն: Դասախոսների աշխատանքի ինքնավերլուծությունը կատարվում է համաձայն տարեկան անհատական պլանի և հնարավորություն է տալիս անդրադարձ կատարել ողջ ուսումնական տարվա ընթացքում իր կողմից իրականացված աշխատանքներին, վերհանել բացթողումներն ու գտնել ուղիներ դրանք շտկելու համար: Դրանք ներկայացվում և քննարկվում են ամբիոնային նիստերին:

Ցանկալի է մշակել մեխանիզմ, ունենալ բազմագործոն «գործիք», որը հնարավորություն կտա բացահայտելու դասավանդողի մասնագիտական կոմպետենցիաների, նրա դասավանդման արդյունավետության կապն ու հարաբերակցությունը ուսանողների տվյալ առարկայից ցուցաբերած / և ընդհանրապես առաջադիմության ցուցանիշների հետ:

Հաշվետու տարում դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները ֆակուլտետում:

Հաշվետու ժամանակաշրջանում դասախոսների կատարելագործման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ներամբիոնային գիտական և առարկայական-մեթոդական սեմինարներ (13),
- դասալսումներ, փոխադարձ դասալսումներ, դրանց քննարկումներ(26),
- վարպետաց դասեր (5)
- ՀՊՄՀ համապատասխան կառույցների և ֆակուլտետի կողմից իրականացվող սեմինարներ(9),
- ներբուհական, հանրապետական և միջազգային կոնֆերանսներ(17),
- վերապատրաստումներ, մասնակցություն որակի ապահովման շաբաթին (8):

Հաշվետու տարում ֆակուլտետի դասախոսները ներգրավված են եղել «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» դրամաշնորհային ծրագրին: Ծրագրի շրջանակներում նրանց կողմից տարբեր ուղղություններով /մաթեմատիկա, մայրենի լեզու, նախադպրոցական կրթություն/ ստեղծվել է վարժությունների շտեմարան, որոնք թվայնացվելու են ծրագրի երկրորդ փուլում վերապատրաստում անցած դասախոսների կողմից /ADOBE ծրագրի միջոցով/: Նույն ծրագրի շրջանակներում ստեղծվել և ամբիոններում քննարկվել է հետազոտական բաղադրիչին, նորարարական մանկավարժական տեխնոլոգիաներին վերաբերող էլեկտրոնային գրքերի շտեմարաններ, որոնք ներկայացվել են ամբիոնների դասախոսներին դրանց հետ ծանոթանալու և դասավանդման ընթացքում ուսանողներին ծանոթացնելու համար:

Պլանավորված վերապատրաստումները, որոնք իրականացվելու են 2019թ. փետրվարին, նախատեսում են դասախոսներին ծանոթացնելու քանակական և որակական հետազոտության մեթոդներին և Adobe ծրագրին, ինչը կնպաստի դասախոսների հետազոտական կարողությունների ձևավորմանն ու մուլտիմեդիայի օգտագործմանը լսարանում:

VI. ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:			
ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2018թ. հրապարակումների թիվ
1	ПРИОРИТЕТЫ ПЕДАГОГИКИ И СОВРЕМЕННОГО ОБРАЗОВАНИЯ: сборник статей Международной научно-практической конференции. Пенза Мцнс «Наука и просвещение»	РИНЦ ISBN 978-5-907046-59-7	1
2	III Международная научно-практическая конференция «Образование и педагогические науки в XXI веке: актуальные вопросы, достижения и инновации», Пенза Мцнс «Наука и просвещение» 5 апреля 2018г., г. Пенза, РФ	РИНЦ ISBN 978-5-9906984-9-9	2
3	«Интеграция теории и	ISBN 541-5-	

	практики мирового научного знания» Г. Москва, Апекс	6506984--9	
4	International Journal of Geometric Methods in Modern Physics		1
5	Образование и педагогические науки в XXI веке, актуальные вопросы, достижения и инновации, сборник статей III международной научно-практической конференции		1
6	Physical Review D		1
7	Педагогика и психология в современном мире: теоритические и практические исследования, сборник статей по материалам IX международной научно-практической конференции, Москва, Россия		1
8	«Интернаука», Россия, Москва	РИНЦ	3
9	Научно-практический журнал "Современное дошкольное образование" Россия, Москва	РИНЦ	1
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2018թ. հրապարակումների թիվ
1	Eurasian Math. Journal		1
2	International Journal of Geometric Methods in Modern Physics		1
3	Наука и просвещение	РИНЦ	1
4	Proceedings of the „IV International Forum on Teacher Education” Kazan (Volga Region) Federal University, Russian Federation	SCOPUS	4
5	Scientific journal <Problems of Education in the 21st Century> Lithuanian Publishers Association	SCOPUS	1
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկանիշը	2018թ. հրապարակումների թիվ
1	«Հայ մանկավարժության երաշխավորները ժամանակից		1

	մանկավարժական մոտեցումների համաքննագրում» Արտագերս		
2	«Յովհաննես Թումանյան. Յանրագիտարան» Յայագիտական հանդես, ՅՊՄՅ		1
3	«Յայագիտական հանդես» ՅՊՄՅ		1
4	«Յայկազեան հայագիտական հանդես» ՊԵյրուլթ		1
5	Մ.Աբեղյանի կերպարը ըստ Յ. Աբեղյանի «Օրերս ինձ հետ են» հուշագրութեան		1
6	«Յովհաննես Թումանեանի դիմանկարի կերտման լեզուաոճական սկզբունքները ժամանակակիցների յուշերում» Ս. Էջմիածին		1
7	ИЗВ. НАН	РИИЦ	1
8	Յայ մանկավարժութեան երախտավորները ժամանակակից մանկավարժական մոտեցումների համաքննագրում (գիտաժողովի զեկուցումների և հոդվածների ժողովածու)	ՅՏԴ 37(091):06 ԳՄԴ 74.03	1
9	<<Ակունք>> Գիտական հոդվածների ժողովածու	ԲՈԿ	2
10	ՅՊՄՅ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ	ԲՈԿ	4

«Տարրական մանկավարժութեան և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժութեան և մեթոդիկա» մասնագիտութեանների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման նպատակով իրականացվել է մի քանի առաջատար բուհերի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչների ուսումնասիրութեան և համեմատութեան: Յաշվի առնելով Ֆիլիանդիայի առաջընթացը սկզբնական կրթութեան զարգացման ոլորտում ուսումնասիրվել են Ֆիլիանդիայի Օուլուի համալսարանի ՄԿԾ-ները: Նշված համալսարանի հետ համագործակցութեան շրջանակներում ՅՊՄՅ սկզբնական կրթութեան ֆակուլտետի տարրական մանկավարժութեան և մեթոդիկա ԲԿ և ՄԿ ծրագրերը բարելավվել են, համապատասխանեցվել: Բրիտանական, Ճոտլանդական, Ամերիկյան մի շարք համալսարանների փորձն ուսումնասիրելու ընթացքում դուրս է բերվել հետազոտական աշխատանքների իրականացման բովանդակային և կազմակերպական մի շարք հարցեր, որոնք հաշվի են առնվել ֆակուլտետում նույն ուղղութեամբ տարվող աշխատանքները պլանավորելիս և կազմակերպելիս: Բեջմարքինգի արդյունքում կատարվել են առաջարկութեաններ, փոփոխութեաններ կատարվել առարկայական նկարագրերում և առարկաների վերջնարդյունքներում:

Ներկայացվել է առաջարկութեանների փաթեթ, որը կօգնի բարելավել հետազոտական աշխատանքների բովանդակութեանն ու արդյունքները ՄԿԾ-ում.

<p>1. ՄԿԾ-ում դասավանդվող բոլոր առարկաների մեկ միջանկյալը դարձնել հետազոտական բնյութի և ծառայեցնել մագիստրոսական թեզի հետազոտական աշխատանքին /արդեն իրականացվում է /:</p> <p>2. Որպես միջանկյալ ստուգման հետազոտական-ստեղծագործական ձևեր կարող են հանդես գալ նախագծային աշխատանքները, իրավիճակների վերլուծությունները, գրույցների և հարցումների իրականացումը և դրանց վերլուծությունն առարկայի համատեքստում/արդեն իրականացվում է /:</p> <p>3. Աշխատանքները կազմակերպելու ընթացքում հենվել մուլտիմեդիոն լսարանների նյութատեխնիկական բազայի վրա, օգտագործել այդ լսարանների հնարավորությունները սեմինարներ, քննարկումներ հետազոտական աշխատանքի արդյունքները ներկայացնելու և վերլուծելու նպատակով /արդեն իրականացվում է /:</p> <p>4. Ծրագրի շրջանակներում ստեղծված նյութերը որպես մոդուլներ ներառել տարբեր առարկաների մեջ, դրանք դարձնելով հասանելի բոլորի համար/ընթացքում է/:</p> <p>Կատարված աշխատանքների արդյունքում մշակվել են մագիստրոսի աշխատանքային պլան, գնահատման չափաբիշներ, դրանք դրվել են կիրառության մեջ:</p> <p>Առաջարկությունները քննարկվել են Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստում և արժանացել է հավանության:</p>
<p>Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:</p>
<p>1. Ուսանողների հետազոտական աշխատանքներին և դրանց արդյունքներին նվիրված ամենամյա ուսանողական գիտաժողովի կազմակերպում (Տես՝ «Սկզբնական կրթության հիմնախնդիրները» ուսանողական գիտաժողով 2018թ. ապրիլ):</p> <p>2. Հոդվածների հրատարակում ուսանողների կողմից:</p> <p>3. Դասախոս-ուսանող գիտական հոդվածների համատեղ հրատարակումներ. այս պահանջը ներառված է նաև մագիստրոսի աշխատանքային պլանում:</p> <p>4. Ուսումնասիրություններ մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների ընթացքում մանկավարժական պրակտիկայի բազա հանդիսացող կրթական հաստատություններում. այդ պահանջի ներառումը մանկավարժական պրակտիկայի առարկայական նկարագրերում: Հետազոտությունների, հատկապես case study, ներկայացումն ու գնահատումը ուսանողների թղթապանակների պաշտպանության ժամանակ:</p> <p>5. Աշխատող ուսանողների կողմից ուսումնասիրությունների իրականացում իրենց կրթական հաստատություններում և դրանց ներկայացում ֆակուլտետային սեմինարների ժամանակ, մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտություններին ուղղված համապատասխան դասընթացների ժամերին:</p> <p>Արդյունքում՝ ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացում, ինչպես նաև բարելավված մագիստրոսական և ավարտական աշխատանքներ, մանկավարժական պրակտիկայի թղթապանակներ:</p>

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

<p>Ֆակուլտետում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը:</p>
<p>Ֆակուլտետի տրամադրության տակ գտնվող լսարաններն ապահովված են անհրաժեշտ տեխնիկայով, ունենք ՏՅՏ–ով հագեցած 6 լսարան, ինչպես նաև խաղերի կենտրոն, 2 մուլտիմեդիոն լսարաններ, 1 մուլտիմեդիոն լաբորատորիա բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: 2019 թվականին նախատեսվում է մուլտիմեդիոն լաբորատորիայի և լսարանների ծրագրային հագեցվածություն:</p> <p>Հարկ է սակայն նշել, որ լսարանային ֆոնդի հետ կապված խնդիրներ ունենում ենք, քանի որ</p> <ul style="list-style-type: none"> •սկզբնական կրթության ֆակուլտետը համալսարանի ամենամեծ ֆակուլտետներից է, որտեղ սովորում են, շուրջ 1200 ուսանողներ, •ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերում, հատկապես Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտական կրթական ծրագիրը, նախատեսված առանցքային դասընթացները պահանջում են աշխատանք փոքր խմբերով, •համալսարանի ռազմավարական ծրագրի կարևորագույն պահանջներով պայմանավորված իրականացվում են պարապմունքներ՝ դասավանդման և ուսումնառության ինտերակտիվ մեթոդներով, աշխատանքը փոքր խմբերով, քննարկումներ: <p>Լսարանային ֆոնդի հետ կապված խնդիրները փորձում ենք լուծել հարակից ֆակուլտետների հետ համագործակցության շնորհիվ:</p> <p>Ֆակուլտետը դժվարություն ունի նաև ուսումնական գործընթացը 2-րդ հերթափոխով</p>

կազմակերպելու հարցում, քանի որ դասերն ավարտվում են բավականին ուշ, և շրջաններից եկել ուսանողները տրանսպորտի հետ կապված խնդիրներ են ունենում /ֆակուլտետի ուսանողների մեծ մասը շրջաններից են/: Արդեն 3-րդ տարին է ֆակուլտետն աշխատում է երկրորդ հերթափոխով (Տես՝ ֆակուլտետի խորհրդի 2018 թվականի թիվ 3 նիստի արձանագրությունը):

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:

1. համագործակցություն, խորհրդատվություն և քննարկումներ Արցախի պետական համալսարանին պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, կրթական տարաբնույթ փաստաթղթերի, ուսումնական նյութերի տրամադրում, Արցախի ուսանողների և դասախոսների մասնակցությամբ կոնֆերանսների կազմակերպում (Ի կատարում՝ Արցախի պետական համալսարանի ռեկտորի 20.06.2017թ. գրության ուղղված ՀՊՄՅ ռեկտորին),
2. բարեգործական այցեր մանկատներ և հատուկ դպրոցներ, կրթական ծառայությունների մատուցում, հանդեսների կազմակերպում (Տես՝ 2017-18 ուստարվա ֆակուլտետի խորհրդի նիստի թիվ 10, թիվ 11 արձանագրությունները ու կից կամավորական գործունեությունը համակարգող պատասխանատուների հաշվետվությունները, սկզբնական կրթության ֆակուլտետի տեղեկատվական հարթակ),
3. վերապատրաստումներ դասախոսների կողմից /Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստումներ, ՀՃՊՀ և ԵԲՀ դասախոսների վերապատրաստումներ/,
4. ուսանողների կամավորական աշխատանք Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներում, ճամբարներում, հասարակական կազմակերպություններում (Տես՝ սկզբնական կրթության ֆակուլտետի Classroom էլեկտրոնային հարթակ «Աշխատող կամավորներ» դասընթաց, ՀՊՄՅ Google.docs),
5. հանդիպումներ և քննարկումներ ֆակուլտետի պրակտիկայի բազա հանդիսացող մանկապարտեզների և դպրոցների մանկավարժների հետ, ուսումնամեթոդական նյութերի տրամադրում (Տես սկզբնական կրթության ֆակուլտետի Classroom էլեկտրոնային հարթակ «Մանկավարժական պրակտիկա» դասընթաց):

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

- Ֆակուլտետի միջազգայնացմանը նպաստող աշխատանքներ.
1. Աշխատաշուկայում բարձր պահանջարկ ունեցող Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրոսի կրթական ծրագրի մշակում օտարերկրյա ուսանողների համար (Տես՝ ՀՊՄՅ տեղեկատվական հարթակ):
 2. Համագործակցության շարունակում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի Կրթության ֆակուլտետի հետ՝ համատեղ կրթական ծրագրի ձեռնարկելու համար:
 3. Համատեղ ցանցային կրթական ծրագրերի մշակում և դրա իրականացում Մինսկի Մաքսիմ Տանկի անվան պետական համալսարանի և Սանկտ-Պետերբուրգի պետական մանկավարժական համալսարանի հետ (Տես՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի զեկուցագիրը ցանցային կրթական ծրագիր վերաբերյալ. 15.10.2018թ.):
 4. Մասնակցություն կրեդիտային շարժունության ծրագրերի:
 - Erasmus Plus ծրագրի շրջանակներում՝
 - 2017-2018 ուստարում՝ 4 ուսանող, 2018-19 ուստարի 1-ին կիսամյակ՝ 2 ուսանող.
 - Ֆինլանդիա, Օուլու համալսարան,
 - 09.07.-31.11.2018թ.՝ 1 ասպիրանտ. Մեծ Բրիտանիա, Կիլե համալսարան /Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոն/:
 5. Ուսանողների ավարտական աշխատանքների փոխադարձ գրախոսում (Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան. 7 ավարտական աշխատանք):
 6. Մագիստրոսական թեզերի համադեկավարում (Ֆինլանդիայի Օուլու համալսարան, Մինսկի Մաքսիմ տանկի անվան պետական մանկավարժական համալսարան. 2 մագիստրոսական թեզ):
 7. Փոխադարձ այցելություններ, դասախոսություններն սեմինարներ (Erasmus Plus ծրագրի շրջանակներում սկզբնական կրթության ֆակուլտետի դեկանի տեղակալ Արմինե Դալլաքյանի այցը Ֆինլանդիայի Օուլու համալսարան. 2018 թվականի մայիս, դասախոսների վերապատրաստում

Ֆինլանդիայի Օուլու համալսարանում սկզբնական կրթության ֆակուլտետի փոխդեկան Լուսինե Պողոսյան, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Մարիանա Ամիրադյան. 2018թ. մայիս, դասախոսների մասնակցություն գիտաժողովների և սեմինարների. Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարան. Նախադպրոցական կրթության հիմնահարցերին նվիրված սեմինարներ. Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսներ Մարիանա Ամիրադյան, Արևիկ Խուզեյան. 2018 թ. նոյեմբեր):

8. Մասնակցություն միջազգային գիտաժողովների (Տես՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի ամբիոնների հաշվետվություններ. 2018 թ. դեկտեմբեր)

9. Հրապարակումներ միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում (Տես՝ սկզբնական կրթության ֆակուլտետի 2018 թվականի հաշվետվության 6-րդ չափանիշը. Հետազոտությունը և գիտության զարգացումը ֆակուլտետում):

10. Ուսանողների մասնակցությունը ՀՊՄՀ «Ամառային դպրոց» ծրագրին (2017-18 ուսումնական տարում 4 ուսանող. մրցույթին դիմել էին 40-ից ավելի ուսանողներ. տես՝ ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի կայքէջ):

Նշված աշխատանքներին զուգահեռ՝ միջազգայնացման ուղղությամբ 2019 թվականին Նախատեսվում են նաև հետևյալ աշխատանքները.

1. Համագործակցություն Ղազախստանի ազգային համալսարանի հետ հետևյալ ուղղություններով՝

- սովորողների ստեղծագործական աշխատանքների համատեղ ցուցադրություններ,
- ամենամյա ուսանողական միջազգային կոնֆերանսի կազմակերպում,
- ժամանակակից մանկավարժական մոտեցումների վերաբերյալ on line ֆեբինարի կազմակերպում:

2. Պայմանավորվածություններ ձեռք բերել մանկավարժական պրակտիկաների կազմակերպման ուղղությամբ (Մինսկի Մաքսիմ Տանկի անվան պետական համալսարան. տես՝ առցանց նամակագրությունն ու քննարկումները, դեկանի հաշվետվությունները):

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ֆակուլտետի աշխատանքներն իր կառույցի որակի ապահովման ուղղությամբ:

Ֆակուլտետում կրթության որակի ապահովման նպատակով իրականացվող աշխատանքները բխում են ՈԱԿ-ի չափանիշներից, համապատասխանում են դրա քաղաքականությանն ու ընթացակարգերին: Ֆակուլտետն իրականացնում է որակի ներքին ապահովման աշխատանքներ, որոնք համապատասխանում են բուհի առաքելությանը, որդեգրած արժեքներին և սերտորեն կապված են բուհի ռազմավարական պլանի հետ: Որակի ապահովման գործընթացները ֆակուլտետում շարունակական բնույթ են կրում, դրանք անընդհատ վերանայման, վերլուծության և զարգացման հնարավորություն են տալիս:

Ֆակուլտետի ամբիոններն ունեն որակի պատասխանատուներ, որոնք կիսամյակի ընթացքում իրականացնում են որոշակի աշխատանքներ՝ սկսած կիսամյակում առարկայական նկարագրերի բովանդակության և վերջնարդյունքների ձևակերպում, ավարտած՝ ուսանողակենտրոն մանկավարժական գործընթացի կազմակերպում:

Ֆակուլտետի որակի ապահովման թիմի կազմն է.

- Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն-ԵվաՄնացականյան /բ.գ.թ., դոցենտ/
- Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոն-Մելանյա Բարսեղյան/ասիստենտ/
- Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկայի ամբիոն-Մարիանա Ամիրադյան/դասախոս/
- ՍԿ ֆակուլտետի որակի պատասխանատու-Լուսինե Պողոսյան /մ.գ.թ., դոցենտ/

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին որակի պատասխանատուները մշակում են որակի աշխատանքների պլան, որի շրջանակներում իրականացվում են աշխատանքները: Կրթության որակի ապահովման հարցերը պարբերաբար քննարկվում են ֆակուլտետի խորհրդի նիստերում (Տես՝ 2017-18, 2018-19 ուսումնական տարիների ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլան և համապատասխան արձանագրություններ):

Կրթության որակի ապահովման նպատակով իրականացվող աշխատանքները ֆակուլտետում իրականացվում են հետևյալ ուղղություններով.

- ուսանողների կայուն և բարձրակ կրթության ապահովում,
- կրթական ծրագրերի ճկունություն, համապատասխանությունն արդի շուկայական պահանջներին, բարենպաստ Նախապայմանների ստեղծում,

<ul style="list-style-type: none"> • կրթական ծրագրերի մշտադիտարկում, • դասավանդման մեթոդների կատարելագործում, դրանց համապատասխանեցումը առարկայի առանձնահատկություններին և կրթական վերջնարդյունքներին, • ուսանողակենտրոն կրթության ապահովում, • տեղեկատվության կառավարում, հուսալիություն: <p>Ֆակուլտետում իրականացվում են կրթական ծրագրերի մշտադիտարկում, որոնց հիման վրա կատարվում է կրթության բովանդակության, դասավանդման և գնահատման մեթոդների, կրթական վերջնարդյունքների, աշխատանքների կազմակերպման վերանայում և կատարելագործում:</p> <p>Ֆակուլտետում աշխատանքներ են իրականացվում որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ:</p>
<p>Ֆակուլտետի ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը որակի ապահովման գործընթացներին հաշվետու տարում:</p>
<p>Կրթության որակի ապահովման գործընթացների արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը ապահովվում է ֆակուլտետի խորհրդի կազմում նրանց առաջադրմամբ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում նրանց ներգրավվածությամբ և մասնակցությամբ, սեմինարների, տարաբնույթ քննարկումների և ֆոկուս խմբերի աշխատանքներում մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվում են կրթական ծրագրի բովանդակությունը, վերջնարդյունքները, ձեռք բերումներն ու դժվարությունները (Տես՝ քննարկումների օրակարգեր, ներկայաթերթիկներ):</p> <p>Հաշվետու ժամանակաշրջանում նմանատիպ քննարկումներ են իրականացվել ֆակուլտետի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանում: Ֆակուլտետի ընդլայնված խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են կրթության որակի ապահովման հարցերը, վեր են հանվում կարիքները, նախանշվում դրանց բավարարման ուղիները:</p>

Սկզբնական կրթության ֆակուլտետի ամբիոններն են.

[Ա շ ո տ Տ ե ը-Գ ը ի գ ո ը յ ան ի ան վ ան մ այ ը ե ն ի ի և ն ը ա դ ա ս ավ ան դ մ ան մ ե թ ո ղ ի կ այ ի ամ ք ի ո ն](#)

[Մ ա թ ե մ ա տ ի կ այ ի և տ ա ը ը ա կ ան ու ս ու ց մ ան մ ե թ ո ղ ի կ այ ի ամ ք ի ո ն](#)

[Ն ա ի ա դ պ ը ո ց ա կ ան մ ան կ ավ ար ժ ու թ յ ան և մ ե թ ո ղ ի կ ան ե ը ի ամ ք ի ո ն](#)